ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ ՀՐԱՄԱՆ

N 18-Ն

30 հունվարի 2026թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիր ատուի անվանու մը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
ծածկագիրը	չափաբաժնի			Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
	համարը	անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/							
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
ՈՒԱԿ-ԷԱՇԱ ՊՁԲ-26/27	7	Սպեղանի թղթյա	1140000	ԱՁ Ռիտա Գասպարյան	25421169	Ք. Երևան, Նանսենի փող. 1Ա շենք բն 28	19.01.2026թ.	«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ	«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից	*
	9	սպեղանի մեկանգամյա օգտագործման	200000							
	10	Սպեղանի մետաքսե	4800000							
	13	Բամբակ	540000							
	15	Ժգուտ	75000							
	16	Բինտ	1500000							
	36	Քթային կանյուլա	800000							
	56	Խալաթ ստերիլ	1350000							
	57	Հոգնայի ծայրադիր ստերիլ	600000							
	61	Պերֆուզորի	1300000							

		երկարաց ուցիչ								
	63	Ձեռնոց բժշկական M	3600000							
	65	Ձեռնոց բժշկական S	1800000							
	66	Ձեռնոց բժշկական L	1800000							
	67	Մեզի անալիզի տարա	400000							
	69	Սավան բժշկական 1.5*2.15	3000000							
	72	տակդիր ներծծող XL	2000000							

* Համաձայն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.12.2025թ. թիվ 2/1 որոշման ԱՁ Ռիտա Գասպարյանը (այսուհետ՝ Մասնակից) ճանաչվել է ընտրված մասնակից 7,9,10,13,15,16,36,56,57,61,63,65,66,67,69,72-րդ չափաբաժինների մասով:

Գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով 09.01.2026 թվականին Մասնակցին www.armeps.am/eaction համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով ներկայացվել է պայմանագիր կնքելու, որակավորման և պայմանագրի ապահովումներ ներկայացնելու առաջարկ:

14.01.2026 թվականին Մասնակցի կողմից ստորագրվել և Համակարգ է բեռնվել պայմանագիր, սակայն վերջինիս կողմից կցվել է փոփոխված պայմանագիր՝ Համակարգի կողմից գեներացված և Պատվիրատուի կողմից ծանուցված պայմանագրի նախագծի նկատմամբ, առանց Պատվիրատուին տեղեկացնելու և համաձայնեցնելու: Մասնավորապես պայմանագրի մատակարարման ժամանակացույցում /Հավելված N2/ ապրանքի մատակարարման ժամկետը պայմանում առկա «3 աշխատանքային օրվա ընթացքում» բառերը փոխարինվել են «7 աշխատանքային օրվա ընթացքում» բառերով:

15.01.2026 թվականին Համակարգի միջոցով Մասնակցին ծանուցվել է, որ, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի, պայմանագրի նախագծում կարող են կատարվել փոփոխություններ միայն կողմերի համաձայնությամբ, և առաջարկվել է օրենքով սահմանված ժամկետում /մինչև 16.01.2026թ. ներառյալ/, ներկայացնել ստորագրված պայմանագիրը՝ Համակարգի կողմից գեներացված և Պատվիրատուի կողմից ծանուցված պայմանագրի նախագծին համապատասխան:

Մասնակցի կողմից օրենքով սահմանված ժամկետում՝ մինչև 16.01.2025 թվականը, չի ներկայացվել Համակարգի կողմից գեներացված և Պատվիրատուի կողմից ծանուցված նախագծին համապատասխանող պայմանագիր:

ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԵՆ ԾԱՌՈՒԿՅԱՆ

Կատարող՝ Ա. Համբարձումյան
Գնումների համակարգող
Հեռ. /010/ 20 50 50 /218/